# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49»

ք. Երևան

«01» նոյեմբերի 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Չիլինգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թիվ 117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### 3.2. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### 3.3. ԿԱՊԱԼԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 3.4. ԿԱՊԱԼԱՌՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով

պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps հàմակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 21600000 (քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 3600000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ____________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Վ ԵՎ Ա» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 14/7
<< Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000309460100
ՀՎՀՀ01511986

Ա. Չիլինգարյան ____________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1
«01» նոյեմբերի 2018թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թիվ 117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերում**

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | |
| | **Կաթսայատան շին աշխատանքներ** | | | | |
| 1 | 3-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով կողլիցք | մ$^3$ | 16.0000 | 1.7151 | 27.4416 |
| 2 | Մշակված հողի ձեռքով բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ | տն | 21.6000 | 2.5767 | 55.6567 |
| 3 | Հողի հետլիցք ձեռքով | մ$^3$ | 4.0000 | 4.6232 | 18.4928 |
| 4 | Բետոնից ժապավենաձև հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից | մ$^3$ | 11.5000 | 33.0787 | 380.4051 |
| 5 | Միաձույլ երկաթբետոնե բարավորների պատրաստում B-15 դասի բետոնից | մ$^3$ | 0.5400 | 54.3961 | 29.3739 |
| 6 | Ամրանի արժեքը | տն | 0.0360 | 300.4257 | 10.8153 |
| 7 | Միաձույլ Ե/բ միջուկների պատրաստում B-15 դասի բետոնից | տն | 1.2800 | 68.0423 | 87.0941 |
| 8 | Ամրանի արժեքը | տն | 0.2080 | 300.4257 | 62.4885 |
| 9 | Միաձույլ Ե/բետոնե գոտու պատրաստում B-15 դասի բետոնից | մ$^3$ | 2.4000 | 43.6377 | 104.7305 |
| 10 | Ամրանի արժեքը | տն | 0.0920 | 300.8983 | 27.6826 |
| 11 | Միաձույլ Ե/բետոնե ծածկի սալի պատրաստում B-15 դասի բետոնից | մ$^3$ | 2.5000 | 43.6571 | 109.1428 |
| 12 | Ամրանի արժեքը | տն | 0.2310 | 300.4257 | 69.3983 |
| 13 | Մետաղական էլեմենտների տեղադրում | տն | 0.2260 | 544.6987 | 123.1019 |
| 14 | Ցոկոլային մասի շարվածք բազալտե սրբատաշ քարից | մ$^2$ | 10.0000 | 16.6088 | 166.0880 |
| 15 | Թիկունքային մասի բետոնե պատի պատրաստում B 7.5 դասի բետոնից | մ$^3$ | 2.9000 | 27.9070 | 80.9303 |
| 16 | Կանոնավոր ձևի տուֆ քարից պատերի շարվածք | մ$^3$ | 19.0000 | 14.6642 | 278.6198 |
| 17 | Ամրանի արժեքը | տն | 0.0400 | 300.4257 | 12.0170 |
| 18 | Տանիքի ջրամեկուսիչ շերտի պատրաստում հիդրոիզոլից | մ$^2$ | 13.5000 | 0.7436 | 10.0386 |
| 19 | Շլաքաբետոնի շերտի պատրաստում B 7.5 դասի բետոնից | մ$^3$ | 1.7000 | 25.5121 | 43.3706 |
| 20 | Տանիքի ց/ավազե սվաղ 30մմ հաստությամբ | մ$^2$ | 13.5000 | 0.8483 | 11.4521 |
| 21 | Տանիքի գոլորշամեկուսիչ շերտի պատրաստում 2 շերտ իզոգամից | մ$^2$ | 13.5000 | 2.2113 | 29.8526 |
| 22 | Ներսի պատերի ց/ավազե սվաղ | մ$^2$ | 47.0000 | 1.2740 | 59.8780 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24 | Նույնը առաստաղի | $մ^2$ | 13.5000 | 0.7274 | 9.8199 |
| 25 | Արտաքին պատերի ց/ավազե սվաղ | $մ^2$ | 59.0000 | 1.0893 | 64.2687 |
| 26 | Մետաղական դռան տեղադրում | տն | 0.1800 | 450.8121 | 81.1462 |
| 27 | Մ/պլաստե պատուհան | $մ^2$ | 3.0600 | 18.9573 | 58.0093 |
| 28 | Բնահողի տոփանում խճով | $մ^2$ | 120.0000 | 0.2193 | 26.3160 |
| 29 | B 7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ | $մ^3$ | 1.3500 | 23.5713 | 31.8213 |
| 30 | 30մմ հաստությամբ ցեմենտե հարթեցնող շերտ երկաթացումով | $մ^2$ | 13.5000 | 1.0280 | 13.8780 |
| 31 | Արտաքին պատերի ներկում ֆասադային ներկով | $մ^2$ | 59.0000 | 0.4450 | 26.2550 |
| 32 | Մետաղական դռան յուղաներկում 2 անգամ | $մ^2$ | 7.1000 | 0.8768 | 6.2253 |
| 33 | Բետոնից սալվածքի պատրաստում B15 դասի բետոնից | $մ^3$ | 2.1000 | 28.6101 | 60.0812 |
| | Ջեռուցում /մանկապարտեզ/ | | | | 0.0000 |
| 1 | Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ | էկմ | 322.3000 | 0.5200 | 167.5960 |
| 2 | Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը | սեկց | 1151.0000 | 3.4545 | 3976.1295 |
| 3 | d=57x3,0մմ պողպատե խողովակների մոնտաժում | գմ | 10.0000 | 2.1620 | 21.6200 |
| 4 | d=57x3,0մմ պողպատե խողովակների հիդրավլիկ փորձարկում | գմ | 10.0000 | 0.0596 | 0.5960 |
| 5 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф50մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 12.0000 | 3.2312 | 38.7744 |
| 6 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф40մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 145.0000 | 2.4760 | 359.0200 |
| 7 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф32մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 130.0000 | 1.4368 | 186.7840 |
| 8 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф25մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 102.0000 | 1.2474 | 127.2348 |
| 9 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф20մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 190.0000 | 1.2677 | 240.8630 |
| 10 | Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչներով d=50մմ | գմ | 12.0000 | 0.2438 | 2.9256 |
| 11 | Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչներով d=40մմ | գմ | 145.0000 | 0.1916 | 27.7820 |
| 12 | Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչներով d=32մմ | գմ | 130.0000 | 0.1567 | 20.3710 |
| 13 | Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչներով d=25մմ | գմ | 102.0000 | 0.1219 | 12.4338 |
| 14 | Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում ռետինե խողովակաձև մեկուսիչներով d=20մմ | գմ | 190.0000 | 0.0958 | 18.2020 |
| 15 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф25մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 20.0000 | 1.2474 | 24.9480 |
| 16 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф20մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 395.0000 | 1.2677 | 500.7415 |
| 17 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Ф16մմ /լվացումով և փորձարկումով/ | գմ | 260.0000 | 1.1956 | 310.8560 |
| 18 | Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ | հատ | 320.0000 | 0.1358 | 43.4560 |
| 19 | Պոլիպրոպիլենային կցամասեր | հատ | 400.0000 | 0.0610 | 24.4000 |
| 20 | Բաշխիչ կոլլեկտորներ L=0,8մ, Ф108x4,0մմ | հատ | 4.0000 | 48.3745 | 193.4980 |
| 21 | Ф15մմ ջերմակարգավորող փականների տեղադրում | հատ | 101.0000 | 2.9074 | 293.6474 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22 | Φ15մմ գնդիկավոր փականների տեղադրում | հատ | 101.0000 | 2.9074 | 293.6474 |
| 23 | Φ15մմ օդի հեռացման փականների տեղադրում ջեռուցման սարքի վրա | հատ | 101.0000 | 1.5276 | 154.2876 |
| 24 | Φ50մմ փականների տեղադրում | հատ | 4.0000 | 5.4693 | 21.8772 |
| 25 | Φ32մմ փականների տեղադրում | հատ | 9.0000 | 4.1457 | 37.3113 |
| 26 | Φ40մմ փականների տեղադրում | հատ | 3.0000 | 4.7378 | 14.2134 |
| 27 | Φ32մմ թողարկիչ փականների տեղադրում | հատ | 4.0000 | 4.1457 | 16.5828 |
| 28 | Φ15մմ խցանային փականների տեղադրում | հատ | 37.0000 | 2.8830 | 106.6710 |
| 29 | Φ15մմ եռաքայլ թողարկիչ փականների տեղադրում | հատ | 37.0000 | 3.7222 | 137.7214 |
| 30 | Φ40մմ ֆիլտրի տեղադրում | հատ | 1.0000 | 5.6906 | 5.6906 |
| 31 | Φ32մմ ֆիլտրի տեղադրում | հատ | 3.0000 | 4.7140 | 14.1420 |
| 32 | Ջեռուցման մարտկոցների ամրակներ | հատ | 292.0000 | 0.3631 | 106.0252 |
| 33 | Խողովակների ամրակներ | հատ | 2500.0000 | 0.1306 | 326.5000 |
| 34 | Միջհարկային ծածկերի մեջ անցքերի բացում Φ100մմ | հատ | 91.0000 | 2.7734 | 252.3794 |
| 35 | Պատերի մեջ անցքերի բացում Φ150մմ | հատ | 2.0000 | 3.4519 | 6.9038 |
| 36 | Պատերի մեջ անցքերի բացում Φ100մմ | հատ | 22.0000 | 3.4519 | 75.9418 |
| 37 | Պատերի մեջ անցքերի բացում Φ600x400մմ 2հատ | մ$^{3}$ | 0.2400 | 15.1618 | 3.6388 |
| | Ապամոնտաժային աշխատանքներ | | | | 0.0000 |
| 38 | Φ$_{միջ}$.32մմ խողովակների ապամոնտաժում /պահեստավորումով/ | գմ | 1000.0000 | 0.2641 | 264.1000 |
| 39 | Ջեռուցման սարքերի ապամոնտաժում /պահեստավորումով / 800 սեկցիա/ | հատ | 100.0000 | 0.7573 | 75.7300 |
| 40 | Ապամոնտաժումից առաջացած պիտանի նյութերը շենքից դուրս բերում, բարձում ա/ինքնաթափ.և տեղափոխում 7կմ | տն | 12.8000 | 1.9257 | 24.6490 |
| 41 | Պատերի և ծածկի մեջ գոյություն ունեցող անցքերի փակում 80հատ | մ$^{3}$ | 1.6000 | 39.8364 | 63.7382 |
| | **Կաթսայատան ջերմատեխնիկական մաս** | | | | 0.0000 |
| 1 | Ջրատաքացուցիչ կաթսա Q=130կՎտ 111000կկալ/ժամ | հատ | 2.0000 | 90.3258 | 180.6516 |
| 2 | Ավտոմատացված այրիչ բնական գազի համար | հատ | 2.0000 | 28.1376 | 56.2752 |
| 3 | Ծխնելույզ ը Ø200մմ, H=6մ, 2հատ | գմ | 12.0000 | 12.5978 | 151.1736 |
| 4 | Ծխատար Ø200մմ | գմ | 1.0000 | 12.5978 | 12.5978 |
| 5 | Պայթման ապափովիչ կափույր Ø150մմ | հատ | 2.0000 | 35.6940 | 71.3880 |
| 6 | Ցանցային ջրի շրջապտույտի պոմպ Q=11,2մ$^{3}$/ժ, H=15մ, N=2,1կվտ | հատ | 2.0000 | 26.9212 | 53.8424 |
| 7 | Տաք ջրամատակարարման շրջանառու պոմպ Q=2.5մ$^{3}$/ժ H=10մ N=0,64կվտ | հատ | 2.0000 | 21.1029 | 42.2058 |
| 8 | Ցանցային ջրի համալրման պոմպ Q=2.2մ$^{3}$/ժ H=10մ N=0,64կվտ | հատ | 2.0000 | 19.5974 | 39.1948 |
| 9 | Թիթեղայինր ջրատաքացուցիչ 35000կկալ/ժամ հզորությամբ /40կվտ/ | հատ | 2.0000 | 17.1126 | 34.2252 |
| 10 | Բաշխիչ կոլեկտորներ L=1.0մ, Φ133x4,0մմ | հատ | 2.0000 | 58.5628 | 117.1256 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Ընդարձակման բաք V=200լ, D=600մմ, H=900մմ | հատ | 1.0000 | 11.4226 | 11.4226 |
| 12 | Էլեկտրամագնիսական ֆիլտր T-20 տիպի | հատ | 1.0000 | 28.8121 | 28.8121 |
| 13 | Կեղտազտիչ 16г սերիայի N4 d=273 H=400մմ | հատ | 1.0000 | 25.5645 | 25.5645 |
| 14 | Լվացարանի տեղադրում | հատ | 1.0000 | 5.4231 | 5.4231 |
| 15 | Դեֆլեկտոր <<ՑԱԳԻ N3>> Փ300մմ | հատ | 1.0000 | 10.3070 | 10.3070 |
| 16 | Ճաղավանդակ 1200x250 | հատ | 1.0000 | 10.9508 | 10.9508 |
| 17 | d=89x3,5մմ պողպատե էլեկտրաեռակցված խողովակների մոնտաժում | գմ | 25.0000 | 3.5637 | 89.0925 |
| 18 | d=76x3,0մմ պողպատե էլեկտրաեռակցված խողովակների մոնտաժում | գմ | 16.0000 | 2.7031 | 43.2496 |
| 19 | d=40մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 26.0000 | 1.3775 | 35.8150 |
| 20 | d=32մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 18.0000 | 1.1067 | 19.9206 |
| 21 | d=25մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 12.0000 | 0.9413 | 11.2956 |
| 22 | d=20մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 12.0000 | 0.7671 | 9.2052 |
| 23 | d=15մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 4.0000 | 0.7558 | 3.0232 |
| 24 | Պողպատե խողովակների հիդրավլիկ փորձարկում | գմ | 113.0000 | 0.0638 | 7.2094 |
| 25 | Փ80մմ փականների տեղադրում | հատ | 15.0000 | 17.8866 | 268.2990 |
| 26 | Փ40մմ փականների տեղադրում | հատ | 13.0000 | 4.7378 | 61.5914 |
| 27 | Փ32մմ փականների տեղադրում | հատ | 8.0000 | 4.1457 | 33.1656 |
| 28 | Փ25մմ փականների տեղադրում | հատ | 5.0000 | 3.6328 | 18.1640 |
| 29 | Փ20մմ փականների տեղադրում | հատ | 2.0000 | 3.0284 | 6.0568 |
| 30 | Փ15մմ փականների տեղադրում | հատ | 1.0000 | 2.8830 | 2.8830 |
| 31 | Փ80մմ հետադարձ փականների տեղադրում | հատ | 2.0000 | 18.0434 | 36.0868 |
| 32 | Փ40մմ հետադարձ փականների տեղադրում | հատ | 2.0000 | 4.8249 | 9.6498 |
| 33 | Փ25մմ հետադարձ փականների տեղադրում | հատ | 2.0000 | 3.6937 | 7.3874 |
| 34 | Ապափովիչ կափույր Ø32մմ | հատ | 2.0000 | 5.8775 | 11.7550 |
| 35 | Խցափակում Փ133մմ | հատ | 2.0000 | 1.5674 | 3.1348 |
| 36 | Մանոմետր P=10մթ. | հատ | 10.0000 | 2.1296 | 21.2960 |
| 37 | Ջերմաչափ t=150C | հատ | 6.0000 | 2.9939 | 17.9634 |
| 38 | Խողովակների 2 շերտ յուղաներկում | $մ^2$ | 2.0000 | 0.8843 | 1.7686 |
| 39 | Խողովակաշարի հակակոռոզիոն 2 շերտ ներկում | $մ^2$ | 18.0000 | 0.5827 | 10.4886 |
| 40 | Խողովակների մեկուսացում ֆոլգայապատ հանքային բամբակով b=40մմ | $մ^2$ | 45.0000 | 1.2534 | 56.4030 |
| | **Կաթսայատան գազամատակարարում** | | | | 0.0000 |
| 1 | Խողովակաշարի անցկացում պողպատե անկար [illegible] | գմ | 2.0000 | 7.2096 | 14.4192 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Խողովակաշարի անցկացում պողպատե անկար խողովակներից ∅57x3,0մմ | գմ | 1.0000 | 2.1620 | 2.1620 |
| 3 | Խողովակաշարի անցկացում պողպատե անկար խողովակներից ∅32մմ | գմ | 6.0000 | 1.2485 | 7.4910 |
| 4 | Փչամաքրման խողովակ d=20մմ | գմ | 10.0000 | 0.8672 | 8.6720 |
| 5 | Գազային խցանային փական d=32մմ | հատ | 4.0000 | 6.5116 | 26.0464 |
| 6 | Գազային խցանային փական d=20մմ | հատ | 2.0000 | 3.9715 | 7.9430 |
| 7 | Խողովակների 2 շերտ յուղաներկում | $մ^2$ | 3.0000 | 0.8843 | 2.6529 |
| 8 | Φ150մմ գազատարի խցափակում | հատ | 1.0000 | 33.6036 | 33.6036 |
| 9 | Խողովակների ամրացում | կգ | 1.5000 | 0.4534 | 0.6801 |
| 10 | Պատի մեջ անցքի բացում Φ100մմ | հատ | 1.0000 | 3.4519 | 3.4519 |
| 11 | Պատի մեջ անցքի բացում Φ50մմ | հատ | 1.0000 | 3.4519 | 3.4519 |
| 12 | Պաշտպանիչ պատյան d=80մմ L=0.5մ, 1հատ | գմ | 0.5000 | 3.5637 | 1.7819 |
| 13 | Պաշտպանիչ պատյան d=40մմ L=0.5մ, 1հատ | գմ | 0.5000 | 1.7762 | 0.8881 |
| 14 | Գազատարի փորձարկում | գմ | 19.0000 | 0.3898 | 7.4062 |
| 15 | Գազատարի փչամաքրում | գմ | 19.0000 | 0.4978 | 9.4582 |
| | **Կաթսայատան էլեկտրամատակարարում** | | | | 0.0000 |
| 1 | Արկղ վահանակի կոմպլեկտավորման համար 515x400x215 LEGRAND 20182 | հատ | 1.0000 | 79.6111 | 79.6111 |
| 2 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա LEGRAND 03270 | հատ | 3.0000 | 4.4737 | 13.4211 |
| 3 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա LEGRAND 03272 | հատ | 6.0000 | 4.7088 | 28.2528 |
| 4 | Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 40Ա LEGRAND 03330 | հատ | 1.0000 | 9.5592 | 9.5592 |
| 5 | Արկղ իջեցնող տրանսֆորմատորով ЯТП-0.25 | հատ | 1.0000 | 4.3011 | 4.3011 |
| 6 | Մագնիսական գործարկիչ (Lն=10Ա,Lջ=2.6Ա, Lջ=4Ա, Lջ=6Ա) ПМЛ-122 | հատ | 4.0000 | 8.2652 | 33.0608 |
| 7 | Լուսատու կախովի 1*100վտպաշտպանված НСП11 | հատ | 3.0000 | 3.7888 | 11.3664 |
| 8 | Շիկացման թելիկով լամպ 100վտ. | հատ | 5.0000 | 0.1088 | 0.5440 |
| 9 | Խցիկի վարդակ երկբևեռ հողանցիչով /վերանորոգման գծի/ | հատ | 1.0000 | 1.1374 | 1.1374 |
| 10 | Երկստեղմնավոր անջատիչ /պաշտպանված/ | հատ | 1.0000 | 1.1078 | 1.1078 |
| 11 | ВВГ-3x2,5$մմ^2$ հատվածքով մալուխի անցկացում | գմ | 100.0000 | 3.3506 | 335.0600 |
| 12 | 4ПВ 2.5$մմ^2$ հատվածքով հաղորդալարի անցկացում | գմ | 10.0000 | 0.6339 | 6.3390 |
| 13 | Ճկախողովակ PVC ∅20մմ մ | գմ | 15.0000 | 0.2924 | 4.3860 |
| 14 | Պոլիվինիլքլորիդե խողովակ ∅25մմ | գմ | 9.0000 | 0.3273 | 2.9457 |
| 15 | Ճյուղավորիչ տուփ | հատ | 3.0000 | 0.1045 | 0.3135 |
| 16 | Ճյուղավորիչ տուփ խողովակային | հատ | 7.0000 | 0.1306 | 0.9142 |
| 17 | 4x25մմ շերտավոր պողպատի տեղադրում | գմ | 15.0000 | 0.8304 | 12.4560 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 18 | 5x50x50մմ ,L=2.5մ անկյունային պողպատի տեղադրում | հատ | 3.0000 | 5.9872 | 17.9616 |
| 19 | 4x40մմ շերտավոր պողպատի տեղադրում | գմ | 9.0000 | 1.0497 | 9.4473 |
| | **Արտաքին գազատար** | | | | 0.0000 |
| 1 | 4-րդ կարգի բնահողի մշակում փոսորակներում | $մ^3$ | 2.9000 | 5.7379 | 16.6399 |
| 2 | Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափ և տեղափոխում 13կմ | տն | 5.5100 | 2.5767 | 14.1976 |
| 3 | Պահարանային գազի կարգավորիչ կայան հաշվիչ հանգույցով GSA-25 | հատ | 1.0000 | 62.4276 | 62.4276 |
| 4 | Խողովակաշարի անցկացում պողպատե անկար խողովակներից ∅89x3,5մմ, պնեւմատիկ փորձարկումով /վերգետնյա/ | գմ | 6.0000 | 3.4126 | 20.4756 |
| 5 | Խողովակաշարի անցկացում պողպատե անկար խողովակներից ∅57x3,0մմ, պնեւմատիկ փորձարկումով /վերգետնյա/ | գմ | 40.0000 | 2.1512 | 86.0480 |
| 6 | Խցանային փական d=50մմ | հատ | 2.0000 | 5.0367 | 10.0734 |
| 7 | Գազազդանշանային սարքի տեղադրում ավտոմատ անջատման կափույրով d=50մմ | հատ | 1.0000 | 19.3605 | 19.3605 |
| 8 | Գազատարի միացման տեղ d=159x4,5մմ | հատ | 1.0000 | 38.6656 | 38.6656 |
| 9 | Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից ∅50մմ /H=3.5մ, 6 հատ/ | տ | 0.0970 | 390.3358 | 37.8626 |
| 10 | Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից ∅50մմ /H=6մ, 2 հատ/ | տ | 0.0550 | 390.2382 | 21.4631 |
| 11 | Բետոնե հիմնատակների պատրաստում հենարանների համար B15 դասի բետոնից 600x600x1000(h) | $մ^3$ | 2.9000 | 36.2646 | 105.1673 |
| 12 | Խողովակների 2 շերտ յուղաներկում | $մ^2$ | 16.0000 | 0.8843 | 14.1488 |
| | **Ջերմային ցանց** | | | | 0.0000 |
| 1 | Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում ներառյալ նախաշերտերը hփշ =19սմ, 75$մ^2$ | $մ^3$ | 14.3000 | 1.6837 | 24.0769 |
| 2 | Շին. աղբի բարձում եւ տեղափոխում 13կմ /Y=2/ | տն | 28.6000 | 2.5767 | 73.6936 |
| 3 | Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ | $մ^2$ | 75.0000 | 0.8874 | 66.5550 |
| 4 | Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտաբետոնե խառնուրդից 4սմ հաստությամբ | $մ^2$ | 75.0000 | 1.9999 | 149.9925 |
| 5 | Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտաբետոնե խառնուրդից 3սմ հաստությամբ | $մ^2$ | 75.0000 | 2.0866 | 156.4950 |
| 6 | 4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձելով ա/ինքնաթափ մեքենա | $մ^3$ | 31.0000 | 0.6370 | 19.7470 |
| 7 | Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կմ | տն | 60.5000 | 1.9530 | 118.1565 |
| 8 | 4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողլիցք | $մ^3$ | 79.0000 | 0.5026 | 39.7054 |
| 9 | Ավազի նախապատրաստական շերտի պատրաստում h=10սմ | $մ^3$ | 5.0000 | 3.3034 | 16.5170 |
| 10 | Խրամուղու ետլիցք բուլդոզերով տեղի բնահողով և տոփանում | $մ^3$ | 79.0000 | 0.2586 | 20.4294 |
| 11 | Կանալի և ջերմային հորի տակ բետոնե հիմքի նախապատրաստական շերտ B12,5դասի բետոնից | $մ^3$ | 5.0000 | 26.4100 | 132.0500 |
| 12 | Կանալի և ջերմային հորի պատերի պատրաստում B12,5դասի բետոնից | $մ^3$ | 6.5000 | 43.0004 | 279.5026 |
| 13 | Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների մոնտաժում | $մ^3$ | 5.0400 | 13.6702 | 68.8978 |
| 14 | Հավաքովի ե/բ սալի արժեքը П5-8 | հատ | 9.0000 | 14.2811 | 128.5299 |
| 15 | Հավաքովի ե/բ սալի արժեքը П5g-8 | հատ | 9.0000 | 3.9273 | 35.3457 |
| | | | [illegible] | [illegible] | [illegible] |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Մետաղական հորան (люк) Ф700մմ | հատ | 2.0000 | 62.3986 | 124.7972 |
| 18 | d=76x3,0մմ պողպատե էլեկտրաեռակցված խողովակների մոնտաժում | գմ | 45.0000 | 2.7344 | 123.0480 |
| 19 | d=40մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 110.0000 | 1.1860 | 130.4600 |
| 20 | d=32մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 35.0000 | 0.9961 | 34.8635 |
| 21 | d=25մմ պողպատե ջրագազատար խողովակների մոնտաժում | գմ | 55.0000 | 0.8455 | 46.5025 |
| 22 | Պողպատե խողովակների հիդրավլիկ փորձարկում | գմ | 245.0000 | 0.0596 | 14.6020 |
| 23 | Ф50մմ փականների տեղադրում | հատ | 4.0000 | 5.4693 | 21.8772 |
| 24 | Ф32մմ փականների տեղադրում | հատ | 2.0000 | 4.1457 | 8.2914 |
| 25 | Ф25մմ փականների տեղադրում | հատ | 2.0000 | 3.6328 | 7.2656 |
| 26 | Մետաղական անշարժ հենարաններ | կգ | 42.0000 | 0.4168 | 17.5056 |
| 27 | Շարժական հենարաններ /60կգ/ | հատ | 7.0000 | 9.0890 | 63.6230 |
| 28 | Մետաղաան հենարաններ N10 շվելլերից | տն | 0.1500 | 454.8449 | 68.2267 |
| 29 | Բետոնե հենաբարձիկներ 200x100x100մմ բետոն B12,5 դասի բետոնից | $մ^3$ | 0.0400 | 34.0648 | 1.3626 |
| 30 | Խողովակների ներկում հակակոռոզիոն սառը իզոլային քսուկով 2 անգամ | $մ^2$ | 44.0000 | 0.5827 | 25.6388 |
| 31 | Խողովակների մեկուսացում ֆոլգայապատ հանքային բամբակով b=40մմ | $մ^2$ | 75.0000 | 1.2534 | 94.0050 |
| | <u>Արտաքին էլեկտրամատակարարում</u> | | | | 0.0000 |
| 1 | АВВГ-4x10$մմ^2$ հատվածքով ալյումինե մալուխի անցկացում | գմ | 30.0000 | 0.9310 | 27.9300 |
| 2 | АВВГ-4x10$մմ^2$ հատվածքով ալյումինե մալուխի անցկացում | գմ | 28.0000 | 3.3950 | 95.0600 |
| 3 | Մալուխի չոր հարդարում | հատ | 2.0000 | 2.4012 | 4.8024 |
| 4 | Խողովակ վինիպլաստե Ø100 | գմ | 30.0000 | 6.6674 | 200.0220 |
| 5 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 8.4000 | 3.0249 | 25.4092 |
| 6 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 6.3000 | 0.8763 | 5.5207 |
| 7 | Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենայի վրա և տեղափոխում 13 կմ /2,1/ | տն | 4.0000 | 20.1537 | 80.6148 |
| 8 | Ավազից անկողնակի պատրաստում մալուխի համար | գմ | 30.0000 | 1.5502 | 46.5060 |
| 9 | Ավազի արժեքը | $մ^3$ | 2.1000 | 1.9158 | 4.0232 |
| 10 | Մայթի ա/բետոնի ծածկույթի քանդում ներառյալ շերտերը | $մ^3$ | 0.4500 | 10.6180 | 4.7781 |
| 11 | Շին աղբի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենայի վրա և տեղափոխում 13 կմ | տն | 1.0000 | 20.1537 | 20.1537 |
| 12 | Մայթի h=12սմ հաստությամբ խճի շերտի վերականգնում | $մ^2$ | 3.0000 | 2.4331 | 7.2993 |
| 13 | Մայթի h=3սմ հաստությամբ ա/բետոնե ծածկույթի վերականգնում | $մ^2$ | 3.0000 | 2.1908 | 6.5724 |
| 14 | Ամրակ | հատ | 25.0000 | 0.2612 | 6.5300 |
| | Ընդամենը | | | | 16279.8410 |
| | Սարքավորումներ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | | | 18000.0000 |
| | ԱԱՀ | 20% | | | 3600.0000 |
| | Ընդամենը | | | | 21600.0000 |

**Տեխնիկական առաջադրանք**

1.Իրականացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ըստ շինարարական նորմերի և կանոնների:

2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

3. Սահմանված կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագործող կազմակերպությունների մասնակցությամբ կատարել բոլոր անհրաժեշտ փորձարկումները՝ կազմելով դրանց ակտերը:

4. Կապալառուն պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում նախագծային կազմակերպության կողմից կազմված նախահաշվում ներառված գնի սահմաններում Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել օբյեկտում օգտագործվելիք հարդարման և երեսպատման նյութերի (մետլախ, կաֆել, պրեսգրանիտ, կերամոգրանիտ, մամլոգրանիտ, լամինատ, կերամիկական սարքավորումներ, ծորակներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, ալյումինե ․բազրիքներ և այլն) նմուշները, ներկայացնելով նաև դրանց գինը հիմնավորող փաստաթղթերը և սերտիֆիկատները:

Վերոգրյալ ժամկետի կամ պայմանի խախտման դեպքում նույն նախահաշվային գնի սահմաններում Կապալառուն պարտավոր է ձեռք բերել վերոգրյալ նյութերը Պատվիրատուի ընտրությամբ:

5. Կապալառուն պարտավոր է շինարարական աշխատանքների ընթացքում օբյեկտում մշտապես ապահովել մրցույթի փաստաթղթերով ներկայացված աշխղեկի՝ Վաղարշակ Ավետիսյանի և կոմունիկացիոն համակարգերի ինժեների ներկայությունը: Կապալառուն վերոգրյալ աշխղեկին և կոմունիկացիոն համակարգերի ինժեների կարող է փոխարինել մրցույթի պայմաններին բավարարող այլ անձով, նախապես այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին, ներկայացնելով նոր ինժեների որակավորումը հավաստող փաստաթղթերը:

6. Կապալառուն պարտավոր է մեկամսյա ժամկետում ուսումնասիրել նախագծային փաստաթղթերը և թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին գրավոր հայտնել Պատվիրատուին

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ____________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Վ ԵՎ Ա» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 14/7
« Հայբիզնեսբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1150000309460100
ՀՎՀՀ 01511986

Ա. Չիլինգարյան ____________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«01» նոյեմբերի 2018թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թիվ 117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ** | պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 20.12.2018թ. |

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Վ ԵՎ Ա» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 14/7
« Հայբիզնեսբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1150000309460100
ՀՎՀՀ 01511986

Ա. Չիլինգարյան---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«01» նոյեմբերի 2018թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45611100 | **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թիվ 117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ** | ------------ | ------------ | ------------ | 21600000 | 21600000 | 21600000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Վ ԵՎ Ա» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 14/7
« Հայբիզնեսբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1150000309460100
ՀՎՀՀ01511986

Ա. Չիլինգարյան------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«01» նոյեմբերի 2018թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________ | հհ________ |
| հվհհ ________ | հվհհ________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________.

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________ | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
«01» նոյեմբերի 2018թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն